ԿԱՔՆԱՂԲՅՈՒՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Թալինի շրջանի Կաքնաղբյուր գյուղից 1 կմ արևելք, բարձր բլրի գագաթին, պահպանվում են բավական մեծ ամրոցի հետքեր, որոնք ծածկված են խեցեղենի բեկորներով։ Ամրոցի թվագրությունը որոշելու համար 1979 թ. ամռանը պեղվեցին նրա արևմտյան կողմում գտնվող երեք սալարկղային դամբարաններ, որոնցից երկուսը, ըստ երևույթին, կողոպտված էին, իսկ երրորդը, որը հաղիվ էր նշմարվում, պարունակում էր հետաքրքիր նյութեր։ Այս դամբարանը (երկարությունը՝ 140 սմ, լայնությունը՝ 50 սմ, խորությունը՝ 57 սմ) տուֆե սալարկղ էր, որի հատակն ամրացված էր սեմզայի խարամով։ Դամբարանի ուղղությունը արևմուտքից-արևելք էր. հանգուցյալը պառկած էր աջ կողքին, դեմքը դեպի հարավ, ոտքերը կիսածալած, ձեռքերը կողքերին։ Դամբարանից հայտնաբերվեցին կավե սափոր, բրոնզե պոչով ոսկյա շղասեղ, ոսկե շապիկով փոքր մասանի, արծաթե համաձուլվածքից պատրաստված շրջանաձև հայելու կեռ, ուլունքներ և տափակ, բրոնզե օղ (տե՛ս նկարը)։ Սալարկղային դամբարանները, ինչպես և ծալված ոտքերով հանգուցյալի թաղումները բնորոշ են անտիկ դարաշրջանին։

Ուղեկցող նյութերի բնույթից կարելի է ենթադրել, որ դամբարանի հանգուցյալը կին է եղել։ Կավե սափորը (բարձրությունը՝ 18 սմ, հատակի շրջանագիծը՝ 7 սմ, բերանը՝ 9 սմ) գտնվում էր գանգի մոտ, դամբարանի աջ անկյունում։ Այն պատրաստված է բրուտի դարգի վրա, անզարդ է, դրսից և ներսից ներկված կարմիր անգրով, փոքր-ինչ ձգված, գնդաձև, անկանթ, դեպի դուրս լայնացող շուրթերով և հենված է շրջանաձև ոտքի վրա։ Այս սափորը նման է Դաանիից և Արտաշատից պեղված համանման կավանոթներին, որոնք թվագրվում են մ. թ. I և II դդ.[1]։ Դամբարանի թվագրությանը նպաստում է նաև արծաթե համաձուլվածքից պատրաստված շրջանաձև հայելին (տրամագիծը 4 սմ), որպիսիք հանդիպում են միայն անտիկ դարաշրջանում։ Այն պահպանված է կիսով չափ, տուն բռնակի է, զարդերից զուրկ և նման է Դաանիում գտնված օրինակին[2]։

Արվեստի յուրօրինակ ստեղծագործություն է բրոնզե պոչով ոսկյա շղասեղը (երկարությունը 14 սմ), որը գտնվում էր գանգի տակ և, անտարակույս, ծառայել է իբրև վարսակալ։ Շղասեղները Հայկական լեռնաշխարհում հայտնի են բրոնզե դարից և հասնում են մինչև միջնադար։ Դրանք օգտագործվել են ոչ միայն մազեր, այլև հագուստ զարդարելու համար։ Շղասեղներ պատրաստվել են տարբեր մետաղներից և ոսկրից։ Կաքնաղբյուրի դամբարանի շղասեղն իր կատարման տեխնիկայով ու ձևով կարող է դասվել արվեստի այն ստեղծագործությունների շարքը, որոնք Հայաստանում հայտնի են եզակի նմուշներով։ Շղասեղի գլխիկը (շրջագիծը՝ 6 սմ) նմանվում է խույրի, որը բաժանված է 16 հավասար ակոսների։ Այդ ակոսները գագաթային մասում առաջացնում են փոսիկ, որի կենտրոնում, կլոր շրջանակի մեջ, տեղադրված է եռանկյունաձև թեփուկներով ամրացված մուգ կարմիր սուտակե քար։ Շղասեղի գլխիկը ոսկե ամրողջական թիթեղից է, սա իր մեջ ամփոփում է բրոնզե պոչի լայն գլուխը։ Գլխիկից շարունակվում է վզիկը (երկարությունը՝ 2 սմ), որը լայնանալով առաջացնում է քառանկյունի հաստ ելուստներ։ Սրանց անկյունների՝ վերևից և ներքևից, ամրացված են 4-ական գնդիկներ, որոնց ընդհանուր թիվը հասնում է 32-ի։ Քառանկյունի ելուստների հարթակները հենվում են կլոր շրջանակի վրա, որի տակ տեղադրված է նույնպես ոսկյա ուլունքաշար գոտին։ Սրան հաջորդում են 3 ուռուցիկ գոտիներ, որոնցից ներքև գտնվող խողովակաձև մասը միացված է շղասեղի բրոնզե պոչին։ Վերջինս զերծ է որևէ զարդից և վերջանում է սուր ծայրով։

Կանացի զարդարանքների մեջ իրենց ուրույն տեղն ունեին մատանիները։ Կաքնաղբյուրի դամբարանից հայտնաբերված մատանին իր ձևով ոչնչով աչքի չի ընկնում, սակայն յուրահատուկ է պատրաստման տեխնիկայով։ Մատա-

---

[1] Б. Н. Аракелян, Гарни, II, Ереван, 1957, с. 49. 51; Ж. Д. Хачатрян, Гарни, V, Ереван, 1976, с. 47—48.

[2] Б. Н. Аракелян, Гарни, II, с. 77.

նին պղնձե կլոր օղ է՝ պատված ոսկե շապիկով։

Դամբարանից հայտնաբերված հաջորդ իրը բրոնզե բարակ թիթեղից պատրաստված օղն է (լայնությունը՝ 2,5 սմ. տրամագիծը՝ 2 սմ), որի գործածության նպատակը դժվար է ստույգ որոշել։ Այն, հավանաբար, ծառայել է հագուստների կամ մազերի ամրացման համար։ Ի վերջո, մեծ հետաքրքրություն է ներկայացնում ուլունքաշարը, որը կազմված է տարբեր գույների կիսաթանկարժեք քարերից՝ սարդիոնից, սուտակից և ապակե մածիկից։ Անտիկ շրջանի ուլունքները սովորական են Հայաստանի տարածքում։ Այս ուլունքները հատկապես նման են Գառնիի պեղումներից հայտնաբերված նմուշներին3։

Հայաստանի հնագույն քաղաքների պեղումներից նույնպես գտնվել են ոսկերչական նուրբ տեխնիկայով պատրաստված ոսկյա զանազան զարդեր։ Դրանց մի մասը համարվել է ներմուծված, մյուսը՝ տեղական4 արտադրանք։ Ինչ վերաբերում է վերը նկարագրված ոսկյա շղա-



սեղին, ապա այն կարող էր պատրաստված լինել Արտաշատում կամ էլ Հայաստանի այլ քաղաքներում և բերվել Կաթնաղբյուրի ամրոցը։

Անտիկ ժամանակաշրջանում առևտրափոխանակային հարաբերությունները նկատելիորեն զարգացել և իրենց ոլորտն էին ընդունել նաև գյուղական փոքր ու մեծ բնակավայրերը։ Վերոհիշյալ թանկագին առարկաները խորթ չեն

3 Նույն տեղում, էջ 78—82, Ж. Д. Хачатрян, նշվ. աշխ., տախտ. XXVI, XXVII.

4 Բ. Ն. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976։

Արազածոտնի մասը կազմող Թալինի շրջանին։ Դրա վկայությունն են Կաթնաղբյուրից ոչ հեռու գտնվող Աշնակի դամբարանների նյութերը, որոնք 1909 թ. պատահաբար գտնվել են տեղի բնակիչների կողմից և հրապարակվել։[5] Աշնակի դամբարաններում մեծ քանակ են կազմել ոսկյա զարդերը, ապակյա անոթները, դրամները և այլ իրեր։ Նշված դամբարանները թվագրվում են մ. թ. II—III դդ.[6]։

Այսպիսով, Կաթնաղբյուրի դամբարանի նյութերի համեմատությունը Հայաստանի հելլենիստական կենտրոնների պեղումներից գտնված նյութերի հետ հնարավորություն է տալիս դրանք թվագրելու մ. թ. II—III դդ., որը և օգնում է պատկերացում կազմելու ամրոցի թվագրման մասին։

ԵՍԱՅԻ ԱՍԱՏՐՅԱՆ

---

5 Р. В. Кинжалов, Ашнакский могильник («Труды Государственного Эрмитажа», т. V, Л., 1961, с. 57—59).

6 Նույն տեղում։